

ՀԱՅ-ԹՈՒՐԷԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԵԼ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԿԱՍ 11-ԻՆ

Հայաստանն ու Թուրքիան Հոկտեմբերի 10-ին կը ստորագրեն յարաբերութիւնների կարագաւորման մասին երկու արձանագրութիւնները, Կիրակի օրը յայտարարել է Թուրքիայի վարչապետ Ռեճեօ Էրտողանը:

«Արտգործնախարարները հանդիպում կ'ունենան Հոկտեմբերի 10-ին եւ կը ստորագրեն նախապատրաստուած փաստաթուղթը», - Ֆրանսայրէս» գործակալութեանը ասել է Էրտողանը՝ աւանց լրացուցիչ մանրամասներ հաղորդելու: Աւելի ուշ, ատրպէյճանական Trend գործակալութեան հետ զրոյցում Էրտողանը չի բացատրել, որ հանդիպումը կարող է տեղի ունենալ նաեւ Հոկտեմբերի 11-ին:

Թուրքիայի վարչապետը նաեւ տեղեկացրել է, որ նախապէս համաձայնեցուած երկու արձանագրութիւնների տակ իրենց ստորագրութիւններն են դնելու Հայաստան:

Շաբ.ը էջ 5

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 19-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ՝ «ՄԱՐՏԱՀՐԱՒԵՐՆԵՐՈՒ ԸՆԴԱՌԱՋ» ԿԱՐԳԱԽՕՍԻՆ ՏԱԿ

Շաբաթ, Սեպտեմբեր 26-ին Երեւանի մէջ տեղի ունեցաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան 19-րդ Համագումարի պաշտօնական բացումը՝ «Մարտահրաւէրներու Ընդառաջ» կարգախօսին տակ:

Կառավարութեան շէնքին ներս տեղի ունեցած հանդիսութեան ներկայ էին ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան, Հայաստանի Ժողովրդական Կուսակցութեան առաջնորդ՝ Ստեփան Դեմիրճեան, «Ժառանգութիւն» Կուսակցութեան վարչութեան նախագահ Արմէն Մարտիրոսեան, Հայոց Համագալին Շարժումի վարչութեան նախագահ Արարատ Զուրաբեան, «Նոր Ժամանակներ» Կուսակցութեան նախագահ Արամ Կարապետեան, Լիպերալ Կուսակցութեան նախագահ Յովհաննէս Յովհաննէսեան, ինչպէս նաեւ Հայ Ազգային Գոնկրէսի մաս կազմող բազմաթիւ կուսակցութիւններու ներկայացուցիչներ:

Հանդիսութեան ներկայ էին



նաեւ աւանդական կուսակցութիւններու ներկայացուցիչները՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կողմէ՝ բիւրոյի անդամ Աղուան Վարդանեան եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան կեդրոնական վարչութեան կողմէ՝ Յարութիւն Առաքելեան:

Հանդիսութեան առաջին շարքերու վրայ էին ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամները եւ աշխարհի տարբեր կողմերէն ժամանած ու Հայաստանէն ընտրուած Համագումարի պատուիրակները:

Շաբ.ը էջ 6

Ս.Դ.Հ.Կ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՍԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄՆ ԴԵՍՊՈՒՆՆԵՐ

ԵՐԵՒԱՆ - Երեքշաբթի Սեպտ. 2009-ին, Արևմտեան Ամերիկայի Ս.Դ.Հ.Կ պատուիրակութիւնը, գլխավորութեամբ ատենապետ՝ Տօբթ. Համբլի Սարաֆեանի այցելեց Հայաստանի ԱՄՆ դեսպանատունը ուր հանդիպում ունեցաւ դեսպան՝ Մարի Յովանովիչին հետ:

Աւելի քան մէկ ժամ տեւող հանդիպման ընթացքին քննարկուեցան զանազան հարցեր, որոնցմէ գլխավորը՝ Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններն էին: Հնչակեան պատուիրակութիւնը դեսպանին փոխանցեց իր վերապահութիւնները այդ արձանագրութիւններուն վերաբերեալ, մասնաւորապէս պատմական փաստերու քննարկման ենթադրանքներու եւ անոր ունենալիք լուրջ հետեւանքներուն մասին՝ ցեղասպանութեան ճանաչման առումով:

Մտահոգութիւն յայտնուեցաւ նաեւ այն մասին, որ Հայաստանը բաւարար նախապատրաստական աշխատանք չէ տարած հասարակութիւնը իրազեկելու սահմանի հաւանական բացումէն առաջանալիք հաւանական վտանգներուն եւ խնդիրներուն, մասնաւորապէս, ազգային ապահովութեան, տնտեսական պաշտպանութեան եւ այլ հարցերը վերապերեալ:

ՀԱԶԱՐԱՒՈՐ ՀԱՅԵՐ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՒԱՔԻՆ՝ ԲՈՂՈՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ԴԵՍ

Անցեալ Կիրակի, Սեպտեմբեր 27-ին, Կլեմէնտի «Փելանքոնի Փարք»-ին մէջ տեղի ունեցաւ համագաղութային հաւաք, մասնակցութեամբ շուրջ տասը հազար հայորդիներու: Հաւաքի նպատակն էր Հարաւային Գալիֆորնիոյ Հայութեան բողոքն արտայայտել Հայթիքական արձանագրութեանց դէմ, պահանջելով յառաջիկայ շաբաթուան ընթացքին տեղի ունենալիք միջպետական ստորագրութեանց դադարեցումը:

Սոյն հաւաքը կազմակերպուած էր Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան, Ռամկավար Ազատական Կուսակցութեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ Միացեալ Հայ Երիտասարդներու կազմակերպութեան կողմէ:

Հանդիսավարներ Մելինա Մալիբեան (հայերէն) եւ Գասպար Ճիւլէ-Լէկեան (անգլերէն) իրենց բացման խօսքին մէջ դատապարտեցին նախածրագրուած Արձանագրութիւնը եւ պահանջեցին Հայաստանի կառավարութեանէն յարգել հայ ժողովուրդի ու յատկապէս Սփիւռքի հայութեան կարծիքը, ինչպէս նաեւ Ղարաբաղի հարցի կապակցութեամբ մնալ անզիջող: Բացման խօսքերէն ետք ունկնդրուեցան ԱՄՆ-ի եւ Հայաստանի օրհներգները (Կարինէ Օճախեանի կատարմամբ):

Միացեալ Հայ Երիտասարդներու կազմակերպութեան անունով պահանջատիրական ելոյթով մը հանդէս եկաւ Արութիւն Յարութեան:



Թիւնեան, որ ըսաւ. «Եթէ այս համաձայնութիւնը Հայաստանի նախագահը գիտակցաբար ստորագրած է այդ դաւաճանութիւն է: Իսկ եթէ ստորագրածը միջազգային հզօր պետութիւններու եւ Թուրքիոյ ճնշումին տակ էր, ապա՝ անհրաժեշտ էր անյապաղ հրաժարական տալը:

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան կողմէ ելոյթ ունեցաւ Յարութ Տէր Դաւիթեան: Ան, անդրադառնալով Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններուն, ըսաւ. «Այս արձանագրութիւններու պարզան մենք չենք դիտարկել որպէս առանձնացուած երեւոյթ, այլ կը համարենք տրամաբանական հետեւանքը վերջին 11 տարիներու

ազգայնաս քաղաքականութեան, որ սկսաւ Ռոպերթ Քոչարեանի կողմէ Յեղասպանութեան հարցի Հայաստանի արտաքին քաղաքականութեան հիմնահարց հռչակուելով, շարունակուեցաւ անոր ի լուր աշխարհի կատարած այն յայտարարութեամբ որ Հայաստանը Թուրքիայէն հող պահանջելու իրաւական հիմք չունի, ապա Սերժ Սարգսեանի Մոսկուայէն յայտարարած ֆոտոպոլային քաղաքականութեան մեկնարկումով ուր կը գիշտինք ցեղասպանութեան հարցը դարձնել պատմական յանձնաժողովի քննարկման առարկայ, ապա շարունակուելու համար Ապրիլ 22, 2009-ի տիրահաւանքը վերջին 11 տարիներու

Շաբ.ը էջ 19

ԵԼՈՅԹ

ՅԱՐՈՒԹ ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

**Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ՝
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱԲԱՔԻՆ**

Մի րեյի Հայրենակիցներ,
Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան անունով կուգանք մեր բողոքի ձայնը միացնելու բազմահազար Հայրերին երու ձայներուն, ընդդէմ Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններուն՝ ի մասնաւորի այն դրոյթներուն, որոնք ակնհայտօրէն կը վնասեն համայն հայութեան ընդհանրական շահերուն: Վստահ ըլլալով, որ արդեն մեր ժողովուրդը քաջածանօթ է այդ դրոյթներուն, ու խուսափելու համար աւելորդ կրկնութենէ, մենք պիտի կենդրոնանանք նման փաստաթուղթի մը ծնունդ տուող պատճառներուն վրայ:

Արդարեւ, այս արձանագրութիւններու պարագան մենք չենք դիտարկեր որպէս առանձնացուած երեւոյթ, այլ կը համարենք տրամաբանական հետեւանք՝ վերջին 11 տարիներու ազգամաս քաղաքականութեան, որ սկսաւ Ռոպերթ Քոչարեանի կողմէ Յեղասպանութեան հարցը՝ ձեւակնօրէն Հայաստանի արտաքին քաղաքականութեան հիմնահարց հռչակելով շարունակուեցաւ անոր ի լուր աշխարհին կատարած այն յայտարարութեամբ, որ Հայաստանը Թուրքիայէն հող պահանջելու իրաւական հիմքեր չունի, շարունակուեցաւ Սերժ Սարգսեանի Մոսկուայէն յայտարարած Ֆուլթոնային քաղաքականութեան մեկնարկումով, ուր կը գիշխէր Յեղասպանութեան հարցը դարձնել պատմական յանձնաժողովի քննարկման առարկայ, շարունակուեցաւ Ապրիլ 22, 2009-ի տիրահաշակ ճանապարհային քարտէզով, համելու համար Օգոստոս 31-ի գիշերային այս պարտուողական արձանագրութիւններուն, որոնք ոչ միայն կը վնասեն ներկայ Հայաստանին, այլ նաեւ կը վտանգեն ու խնդրոյ առարկայ կը դարձնեն մեր ժողովուրդի արդարացի պահանջներն ու պատմական իրաւունքները, ինչպէս նաեւ Արցախեան Հերոսամարտի ձեռքբերումները:

Արտաքին քաղաքականութեան մէջ արձանագրուած այս գիշտմաներուն զուգընթաց, ներքին ճակատի վրայ կ'արձանագրուէին կեղծուած ընտրութիւններ, անկախ հեռուստակայաններու փակում, ժողովրդային բողոքներու դէմ հալածանքներ ու բանտարկութիւններ, յանգեւում Մարտ 1-ի ահաւոր սպանդին:

Այս բոլորին որպէս արդիւնք, կ'ունենայինք իր ժողովուրդէն կտրուած, իր ժողովուրդի վստահութիւնը չի վայելող, իրենց անձնական շահերը մեր ազգի ու հայրենիքի շահերէն գերադասող անօրինական իշխանութեան խմբակ մը, որ խոցելի է ու հակամէտ ամէն տեսակի արտաքին ճնշումներու եւ գիշտմաներու: Երբ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեան օրեր առաջ կը յայտարարէր որ այս արձանագրութիւնները վնասաբեր են մեզի համար ու կը պարտադրուին մեր վրայ, պատճառը անցնող 11 տարիներու ազգավնաս ներքին եւ արտաքին քաղաքականութիւնն է:

Մենք կը զարմանանք որ, Տիրան Թորոսեաններ ու Վարդան Օսկանեաններ միայն իշխանութենէն դուրս գալէ ետք կ'ահագանգեն այն վտանգներու մասին, որոնք Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը կը հնչեցնէ անցնող

11 տարիներու ընթացքին:

Առաջնորդուելով ազգային գերագոյն շահերու տեսլականով, ՄԴՀԿ-ը դէմ է նաեւ այս արձանագրութիւններու ամէն տեսակի զգացմունքային եւ ամփոխավարական շահագործումներու: Ան խորապէս կը գիտակցի որ Հայաստանը, որպէս պետութիւն, պարտաւոր է իր հարեւաններուն հետ բարի դրացիական յարաբերութիւններու մէջ մտնելու: Նոյնքան անհրաժեշտ կը համարենք չեղտել, որ երկիրը տարածաշրջանի զանազան գործընթացներուն մասնակից պէտք է դառնայ մեկուսացումէ խուսափելու համար: Հասկնալի էր նաեւ, որ ուշ կամ կանուխ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու վերահաստատման առումով հակասութիւններ պիտի առաջանային Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ, մասնաւոր երբ նկատի ունենանք այն հանգամանքը, որ սփիւռքի համար Թուրքիոյ հետ յարաբերելու նուազագոյն նախապայմանը եղած էր եւ կը մնայ Յեղասպանութեան ճանաչումը եւ վնասուց հատուցումը:

Ինչպէս անցեալին բազմիցս նշած էինք, կը գիտակցինք նաեւ, որ վերջիվերջոյ Հայաստանի քաղաքացիներն են, որ պիտի որոշեն Հայաստանի յետագայ ճակատագիրը եւ ոչ թէ սփիւռքը: Սակայն ինչպէս մենք մեզի բարոյական իրաւունք չենք վերապահեր տնօրինելու Հայաստանի ապագան, Հայաստանի իշխանութիւնները նոյնպէս գէթ խելամտութիւնը պէտք է ունենային օգտուելու սփիւռքահայ մասնագետներու հարուստ աղբիւրէն, նախքան ցեղասպանութեան հարցը Թուրքիոյ հետ բանակցութեան խնդրոյ առարկայ դարձնելը: Որքան ալ իշխանութիւնները փորձեն պնդել, որ այդ կառավարական ենթադրանքները ցեղասպանութեան փաստը պիտի չքննարկեն, պարզապէս միամտութիւն պիտի ըլլայ յոսալ, որ Թուրքիոյ կառավարութիւնը նման փայլուն հնարաւորութիւն պիտի չունայ իր սրտին: Փաստօրէն, այս ամենուն արդիւնքը կ'ըլլայ այն, որ Քոչարեանի եւ այսօրուայ իշխանութիւնները, մասամբ իրենց ապիկարութեան, մասամբ ինքնահաւանութեան եւ ամենացաւալին՝ գերտերութիւններուն մօտ իրենց օրինականութեան հարցերը լուծեն-

լու մղումէն մեկնած՝ կը գոհարեն ցեղասպանութեան հարցը, Թուրքիան մէկընդմիջ ազատելով մղձաւանջէ մը, որ տասնեակ տարիներ անոնցմէ առանց նշանակելի արդիւնքներու հասնելու իրած էր հակառակն նիւթական եւ մարդկային միջոցներ:

Ըստ իշխանութիւններու եւ անոնց յարող կուսակցութիւններու ցարդ կատարած յայտարարութիւններուն եւ կեցուածքներուն, այս արձանագրութիւնները կ'որակուին որպէս Հայ դիւանագիտութեան լուրջ նուաճում: Առ այսօր սակայն, անոնց տուած բոլոր բացատրութիւններն ու պնդումները վստահութիւն չեն ներշնչել եւ ոչ մէկ ձեւով չեն փարատեր հայ ժողովուրդի, ե՛ւ Հայաստանի ե՛ւ Արցախի, ե՛ւ սփիւռքի, իրաւացի մտահոգութիւններն ու կասկածները: Փոխանակ այդ մտահոգութիւններուն սպառնիչ պատասխաններ եւ բացատրութիւններ տալու, իշխանութիւնները առաջին իսկ օրէն ձեռնամուխ եղած են քարոզչական արշաւի, կազմակերպելով մօտ 50 այսպէս կոչուած «կուսակցութիւններու» խորհրդակցական ժողով եւ հարցին մօտենալով «Մենք բոլորէդ խելացի ենք եւ լաւ գիտենք մեր ըրածը» հոգեբանութեամբ: Մինչդեռ լաւագոյն տարբերակը պիտի ըլլար խորհրդակցիլ նախքան քայլ առնելը, որպէսզի ե՛ւ հայրենիքի ժողովուրդը ե՛ւ սփիւռքը նախապատրաստուած ըլլային գալիքին:

Դժբախտաբար, կը բացառենք նաեւ, որ իշխանութիւններուն հլու հնազանդ ծառայող ազգային ժողովը որեւէ առարկութիւն պիտի ունենայ կամ լուրջ քննարկում պիտի ընէ այս հարցի շուրջ եւ ամենայն հաւանականութեամբ զայն անխօս պիտի վաւերացնէ: Կը յուսանք, որ ազգային ժողովի իւրաքանչիւր պատգամաւոր, որ կողմ կը քուէարկէ նման փաստաթուղթի մը, կը գիտակցի, որ ան գործադիր իշխանութիւններու հետ հաւասարապէս պատասխանատու պիտի ըլլայ պատմութեան առջեւ:

Կոչ կ'ուղղենք ե՛ւ գործադիր ե՛ւ օրէնսդիր իշխանութիւններուն, որ գիտակցին պահի լրջութեան եւ գերծ մնան արձանագրութիւնները վաւերացնելէ: Իսկ եթէ իսկապէս այս փաստաթուղթը մեզի պար-



տադրուած է մեծ տէրութիւններու կողմէ եւ ստանձնուած յանձնառութիւններէն անհնար է խուսափիլ, ապա յանուն մայր հայրենիքի, Արցախի ու Հայաստան-Սփիւռք համերաշխութեան, կը մնայ միայն մէկ արժանապատիւ ելք եւ այն ալ Սերժ Սարգսեանի եւ այս իշխանութեանց հրաժարականն է:

Միմիայն ժողովրդավարական կարգերու հաստատումով, արդար ու թափանցիկ ընտրութիւններու միջոցաւ ժողովուրդի վստահութիւնը վայելող եւ օրէնքի գերակայութեամբ առաջնորդող իշխանութեան մը հաստատումով, մենք կրնանք կասեցնել գիշտմաներու այս շղթան եւ սկսիլ գործընթացը՝ կերտելու այն գերիշխան հայրենիքը արժանապատիւ ապագան, որուն արժանի է համայն հայութիւնը:

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՍՐԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Քեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
3 ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՔ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԼՈՍ
ԱՆՃԵԼԸՍԻ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ**

ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի սփիւռքեան կարեւոր գաղթօճակներ այցելելու եւ Հայաստան-Թուրքիա դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման եւ զարգացման գծով նախաստորագրուած զոյգ արձանագրութիւններուն գծով հայ համայնքներուն ներկայացուցիչներուն հետ հանդիպելու եւ խորհրդակցելու նախաձեռնութիւնը կը նկատուի ուշացած եւ առ այդ ժամանակավրէպ:
Ա. փոստ, նախագահը իր վարած արտաքին քաղաքականութեամբ ու մեր ազգային հիմնախնդիրներուն գծով որդեգրած պարտունդական մօտեցումներով վատնեց Հայաստան-Սփիւռք համագործակցութիւնը նոր մակարդակներու բարձրացնելու եւ մեր ազգային միասնակցութիւնը ամրապնդելու սխալ ճիւղով առիթ:
Նախագահի նախաձեռնութիւնը կրկնորոշուելի ըլլալ, եթէ այդ մէկը կատարուէր մեր ժողովուրդին համար նախապատրաստական կարեւորութիւններով կարգաւորող վերոնշեալ զոյգ արձանագրութիւններուն նախաստորագրումէն առաջ, եւ ոչ թէ այդ գծով որոշուի ու վնաս

Շարք էջ 19

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՍՈՒԹԵԱՆԸ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏԱԼԻՍ ՀՐԱԺԱՐՈՒԵԼ ՄԱՆԴԱՏՆԵՐԻՑ

Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) համակարգող Լեոն Զուրաբեանը լրագրողների հետ հանդիպմանը այսօր խորհրդարանական ընդդիմութեանը՝ «Ժառանգութեան» նուրբ հանդիպմանը կոչ արեց վայր դնել մանդատները՝ ի նշան բողոքի ընդդէմ հայ-թրքական արձանագրութիւնների:



ՀԱԿ-ի համակարգող Լեոն Զուրաբեան

նը պահանջելը «ուղղակի մանկամտութիւն է», եւ համոզել ժողովրդին, որ արտգործնախարարն է մեղաւոր այդ արձանագրութիւնների համար, նշանակում է «փորձել օգնել Սերժ Սարգսեանին՝ վարել ներկայիս քաղաքականութիւնը»:

Հարցին, թէ այդ պարագայում ինչու «Ժառանգութիւն»ը միացաւ ՀՅԴ-ին եւ ոչ թէ ՀԱԿ-ին, Զուրաբեանը արձագանքեց. «Եթէ միանում է, եւ այդ կարգախօսներով է միանում, ուրեմն ինքը խաղալու է այդ անպատուաբեր խաղը»:

«Բնականաբար, եթէ տեսնենք, որ նրանց գործողութիւնները աւելի լուրջ թիրախ են ուղղուած, մենք դա եւ կը նկատենք, եւ կ'ողջունենք եւ միասնաբար կ'անենք ամէն ինչ»:

Զուրաբեանը մէկ անգամ էլ բարձրաձայնեց, որ արձանագրութիւնների ստորագրումը կանխելու միակ տարբերակը համաժողովրդական բողոքի ակտն է, որի նպատակը պէտք է լինի նախագահ Սարգսեանի հրաժարականի պահանջը:

Զուրաբեանի համոզմամբ, նման քայլը կարող է «շատ գործօն դառնալ հայ-թրքական յարաբերութիւնների կարգաւորման ներկայ ընթացքը կանխելու համար»:

«Եթէ այսօր Դաշնակցութիւնը եւ «Ժառանգութիւն»ը որոշում են ընդունում վայր դնել իրենց պառլամենտական մանդատները՝ ի բողոք կատարող պրոցեսի, դրանով նրանք, ճիշտ է, իրաւական առումով որեւէ ճգնաժամ չեն առաջացնում, բայց առաջացնում են լրջագոյն քաղաքական ճգնաժամ: Փաստօրէն պարլամենտում այլեւս ընդդիմութիւն չի լինի ներկայացուած: Սա ամբողջ միջազգային հանրութեան համար կը լինի ազդանշան, որ ինչ-որ մի պրոցես է գնում, որը փորձում են փաթակել հայ հասարակութեանը: Եւ սա լրջագոյն ազդակ կը լինի, որը թոյլ կը տայ բեկում մտցնել այս ամբողջ պրոցեսի մէջ», պարզաբանեց Կոնգրէսի ներկայացուցիչ:

Հարցին թէ ինչու «Ժառանգութիւնը» եւ Դաշնակցութիւնը կարողացան պայմանաւորուել համագործակցութեան շուրջ՝ հայ-թրքական արձանագրութիւնները կանխելու շուրջ, իսկ ՀԱԿ-ը՝ ոչ Զուրաբեանն արձագանքեց, որ «Ժառանգութիւն»-ն այդ հարցով իրենց չի էլ դիմել:

Ոստիկանական ծառայության պահանջների մասին՝ Կոնգրէսի ղեկավար ներկայացուցիչն ասաց, որ արտգործնախարարի հրաժարականը

ՔԱՂԲԱՆՏԱՐԿԵԱԼ ՏԻԳՐԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆԸ ԿԱՐՈՂ Է ԿՈՒՐԱՆԱԼ

Սեպտեմբերի 26-ին քաղբանտարկեալ Տիգրան Առաքելեանի պաշտպան Վարդուհի էլբակեանը լրագրողների հետ հանդիպման ժամանակ տեղեկացրեց, որ իր պաշտպանեալի առողջական վիճակը ծայրայեղ ծանր է:



Քաղբանտարկեալ Տիգրան Առաքելեան

Այն բանից յետոյ, երբ Տիգրան Առաքելեանը տեղափոխուել է դատապարտեալների հիւանդանոց, այնտեղ կատարուել են մի շարք հետազոտութիւններ, քանի որ նա բողոքել է ձախ աչքի տեսողութիւնից, եւ ունեցել է գլխապտոյտներ: «Արդէն ունենք, վերջնական եզրակացութիւնը, որ տուել է Առողջապահութեան նախարարութեան գլխաւոր ակնբոյժ փրոֆ. Մալայեանը, ըստ որի ախտորոշուել է ձախ աչքի տեսողական ներուի սուբատրոֆիա եւ ձախ աչքի տեսողաւոր նեղացած է 50 աստիճանով», նշեց Վարդուհի էլբակեանը: Պաշտպանը վստահեցրեց, որ դա հետեւանք է Յուլիսի մէկին ատրճանակի խզակովից ստացուած հարուածից: Երէկ վերաքննիչ դատարանում պաշտպանը պէտք է բողոքարկէր Տիգրանի կալանաւորումը որպէս խափանման միջոց ընտրելու երկարացման կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրաւասութեան դատարանի որոշումը՝ դատաւոր է. Աւետիսեան, սակայն դատախազը եւ վարոյթ իրականացնող մարմինը չէին ներկայացել եւ դատ յետաձգուել է մինչեւ Երկուշաբթի: Այդ ժամանակ պաշտպանը պէտք է առաջարկուէին անի նաեւ Տիգրանին գրաւով բաց թողնելու միջնորդութիւն: Վարդուհի էլբակեանը նաեւ տեղեկացրեց, որ Հինգշաբթի օրը հանդիպել է Տիգրանին եւ նկատել է, որ նա շատ գունատ է եւ ակնյայտ երեւում է, որ նրա աչքը վնասուած է: Պաշտպանի խօսքով մէկուսարանային պայմանները Տիգրան Առաքելեանը առողջ

ջական վիճակը կարող են տանել անգամ կուրացման եւ նրանց անյայտ պէտք է տեղափոխել քաղաքացիական հիւանդանոց:

Պաշտպան էլբակեանը նաեւ նշեց, որ իրենք բողոքարկելու են նաեւ վճռաբեկ դատարան, որտեղ եւս միջնորդութիւն կը ներկայացուի Տիգրանին երախտաւորագրով բաց թողնելու համար: ՀԱԿ իրաւական աջակցութեան ծառայութեա ներկայացուցիչ Արմէն Նաչատրեանը, ով նույնպէս ներկայ էր մամուլի ասուլիսին, նշեց, որ Երկուշաբթի կամ Երեքշաբթի արդէն Եւրոպական դատարան կը գնայ դատարանին ուղղուած նախնական նամակը Տիգրան Առաքելեանի կողմից: «Պատրաստուում ենք Տիգրան Առաքելեանի կալանքի հետ կապուած բողոքարկել ԵՎ Յ-րդ յօդուածի եւ Ե-րդ յօդուածի խոչտանգման հետ կապուած, իրաւունքի խախտումները, որովհետեւ կալանքը ամբողջութեամբ ապօրինի է տրուած եւ դատարանները բաւարարել են քննիչի միջնորդութիւնները՝ խախտելով ներպետական օրէնսդրութեան պահանջները եւ վճռաբեկ եւ ԵԴ նախադէպային ամբողջ պրակտիկան», նշեց Արմէն Նաչատրեանը:

ԱՏԵՓԵՓԱՆ ՍԱՖԱՐԵԱՆ ԵՐՐՈՊԱՆ ԶՈՅԱԲԵՐՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՆՈՒՆ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՄԵՐՁԵՑՄԱՆ.

Անիմատ է այս աշնան ընթացքում ԵՆ-ից եւ այլ եւրոպական կառույցներից սպասել, որ նրանք կ'անդրադառնան Հայաստանի ժողովրդավարացման եւ ներքին հարցերին: Այս մասին, խօսելով ԵՆԽՎ աշնանային նստաշրջանի մասին, յայտարարել է «Ժառանգութիւն» կուսակցութեան պատգամաւոր Ստեփան Սաֆարեանը: Սա, նրա խօսքերով, վերաբերում է ոչ միայն Հայաստանին, այլ նաեւ Թուրքիային:



«Ժառանգութիւն» կուսակցութեան պատգամաւոր Ստեփան Սաֆարեան

միայն առաջնահերթութեան կարգով քննարկելու ցանկութիւնը չկայ, այլ նաեւ եւրակառուցները համոզուած են կամ նրանց համոզել են, որ նման պարտաւորութիւնների կատարման ընթացքին անդրադարձը կարող է վնասել հայ-թուրքական մերձեցման գործընթացին:

Սաֆարեանի խօսքերով՝ սրա առաջին լուրջ նախապայմանը յայտնուեց այն ժամանակ, երբ «Ժառանգութեան» անդամ, ԵՆ ներկայացուցիչ Զարուհի Փոստանճ-

ՄԱՆԴԱՏԻՑ ԶՐԿՈՒԱԾ ՅԱԿՈՒ ՅԱԿՈՒԲԵԱՆԸ ԿՐԿԻՆ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Սատու Միքայէլեանի եւ Յակոբ Յակոբեանի՝ մանդատներից զրկուելուց յետոյ նրանց ընտրատեղամասերում յայտարարուած ընտրութիւնները բաւական ուշագրաւ են լինելու՝ չստակապէս թիւ 8 ընտրատարածքում, որտեղ մանդատից զրկուած Յակոբ Յակոբեանը կրկին առաջադրուել է:

Թիւ 25 եւ թիւ 8 ընտրատարածքներում, որտեղ յայտարարուել են նոր ընտրութիւններ, պատգամաւորական թեկնածուների առաջադրման ժամկէտն աւարտուել է երէկ:

Երէկուայ դրութեամբ, թիւ 8 ընտրատարածքում առաջադրուել են 3 թեկնածուներ Յակոբ Յակոբեանը, Հայաստանի գլխաւոր մարքսիստ Դաւիթ Յակոբեանը եւ անկուսակցական Կորիւն Նահապետեանը: Կորիւն Նահապետեանը թէ-

եւ անկուսակցական է, սակայն, ինչպէս Tert.am-ին ասել է թիւ 8 ընտրատարածքի նախագահ Օլեգ Գրիգորեանը, նա առաջադրուել է ՀՀԿ որոշմամբ:

ԿԸՀ մամուլի ծառայութեան տեղեկացմամբ՝ թիւ 25 ընտրատարածքում 4 առաջադրումներ են եղել, ու որպէս պատգամաւորական թեկնածուներ առաջադրուել են Յարութիւնեան Մխիթարը՝ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնից, ով, ինչպէս արդէն յայտնել ենք, Մաղկաձորի սպորտբազայի նախկին տնօրէնն է, անկուսակցականներ Արթուր Յովհաննիսեանը, Մհեր Հայրապետեանը եւ Մուշեղ Յարութիւնեանը:

Յիշեցնենք, որ այս ընտրութիւնները տեղի են ունենալու Դեկտեմբերի 6-ին:

եանը վերադարձաւ յանձնաժողովի նիստից եւ տեղեկացրեց, որ Հայաստանի հարցը չի քննարկուելու:

«Պարզում է, որ ինչպէս դարբաղեան հակամարտութեան պարագայում է, այստեղ նոյնպէս քիչ

կարեւորութիւն է տրուած երկու երկրների ժողովրդավարացմանը», - ընդգծել է Ստեփան Սաֆարեանը՝ յաւելելով, որ աւելի շատ ուշագրութեան են արժանանամում աշխարհաքաղաքական շահերը:

ՄԱՍԻՍ ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ

ԼՈՒՐԵՐ

ՌԵՃԵՐ ԵՐՏՈՂԱՆ.

«ԹՈՒՐՔԻԱՆ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՆՏԵՍԵԼ ԵՂԱՎՅՐԱԿԱՆ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՇԱՐՅԵՐԸ»

«Հայաստանի հետ յարաբերությունների բարելավման գործընթացում թուրքիան չի կարող հաշուի չառնել Ատրպեյձանի շահերը», երկն Նիլ Երթում տեղի ունեցած ասուլիսում յայտարարել է թուրքիայի վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողանը:



Թուրքիայի վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողան

«Մենք ուզում ենք կարգաւորել յարաբերութիւնները Հայաստանի հետ այնպէս, որ թուրքիան դրանից շահի, միեւնոյն ժամանակ՝ չտուժեն Ատրպեյձանի շահերը», - «Անատոլու» գործակալութեան փոխանցմամբ, ասել է Էրտողանը եւ ընդգծել՝ «խնդրի լուծման այլ տարբերակ մենք չեն պատկերացնում»:

«Միացեալ Նահանգների նախագահ Պարաք Օպամայի հետ հանդիպման ժամանակ ես ասացի, որ թուրքիան չի կարող անտեսել եղբայրական Ատրպեյձանի շահերը: Պարաք Օպաման պատասխանեց, թէ մեծ կարեւորութիւն է տալիս այդ խնդրին եւ խոստացաւ արագացնել ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի աշխատանքները», յայտարարել է թուրքիայի վարչապետը: Էրտողանը տեղեկացրել է, որ միջնորդական խմբի ջանքերը ակտիւաց-

նելու հարցով դիմել է նաեւ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեժեւին:

«Թուրքիան ուզում է բարեկամական յարաբերութիւններ ունենալ բոլոր հարեւան երկրների, այդ թւում՝ Հայաստանի հետ, եւ պատրաստ է այդ ուղղութեամբ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը, սակայն Հայաստանն էլ իր հերթին պէտք է քայլեր ձեռնարկի», - յայտարարել է Ռեճեփ Էրտողանը:

ՀԻԼԸՐԻ ՔԼԻՆԹԸՆ.

«ԱՄՆ-Ի ԿԱՐՉԱԿԱԶՄԸ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է ՀԱՍԱՐՈՒՄ ՍՏԱՏՈՒՄ-ՔՈՒՈՆ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹԻՒՆՈՒՄ»

«Միացեալ Նահանգների վարչակազմը անընդունելի է համարում ստատուս քուոն հայատրպեյձանական հակամարտութիւնում», ըստ Ատրպեյձանի արտգործնախարարութեան՝ յայտարարել է Միացեալ Նահանգների պետքարտուղար Հիլըրի Քլինթընը Ուրբաթ օրը Ատրպեյձանի արտգործնախարար Էլմար Մամեդիարովի հետ հանդիպման ժամանակ:

«Միացեալ Նահանգների նոր վարչակազմը վերահաստատում է իր աջակցութիւնը Ղարաբաղեան խնդրի շուտափոյթ կարգաւորմանը», ասել է ԱՄՆ-ի պետքարտուղարը:

Ատրպեյձանի արտգործնախարարը, իր հերթին, երախտագիտութիւն է յայտնել այն ուղղութեան համար, որ պաշտօնական Ուաշինգթոնը ցուցաբերում է այս խնդրին, եւ նշել է, թէ հակամարտութիւնը հնարաւոր է կարգաւորել միայն ինքնիշխանութեան, տարածքային ամբողջականութեան եւ Ատրպեյձանի միջազգայնօրէն ճանաչուած սահմանների շրջանակում:

Թուրքական լրատուամիջոց-

ների հաղորդմամբ՝ խնդրի շուրջ նոյն օրը մտքեր են փոխանակել նաեւ Միացեալ Նահանգների նախագահ Պարաք Օպաման եւ թուրքիայի վարչապետ Ռեճեփ Էրտողանը, որոնք հանդիպել են Փեթերսբուրգում՝ Մեծ քանակաւի գագաթնաժողովի ընթացքում:

«Անատոլիա» լրատուական գործակալութեան փոխանցմամբ՝ շուրջ 15 րոպէ շարունակուած առանձնազրոյցի ընթացքում Պարաք Օպաման դրական է գնահատել հայ-թուրքական մերձեցումը եւ նշել, որ երկու երկրների միջեւ յարաբերութիւնների գարգացումը մեծ նշանակութիւն ունի ողջ տարածաշրջանի համար:

Թուրքական գործակալութեան հաղորդմամբ՝ Պարաք Օպաման նաեւ ասել է, որ գիտակցում է Ղարաբաղեան խնդրի կարգաւորման կարեւորութիւնը, ինչին ի պատասխան՝ թուրքիայի վարչապետը յայտարարել է, թէ ԵԱՀԿ-ի Մինսկի խումբը, որտեղ համաձայնագրուած են Միացեալ Նահանգները, Ռուսաստանն ու Ֆրանսան պէտք է ակտիւացնի ջանքերը հակամարտութիւնը լուծելու ուղղութեամբ:

ՆԻԻ ԵՈՐՔՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ՀՀ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԻ ԵՒ ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ



Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդեան եւ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոն

Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանը Սեպտեմբերի 28-ին ծաւալուն ելոյթով է հանդէս եկել Միաւորուած ազգերի կազմակերպութեան գլխաւոր ասամբլեայի 64-րդ նստաշրջանում:

Իր ելոյթում Հայաստանի արտգործնախարարն անդրադարձել է մի շարք միջազգային եւ տարածաշրջանային խնդիրների եւ դրանց լուծման վերաբերեալ Հայաստանի մտայնութեանը: Նա ներկայացրել է արցախեան հիմնախնդրի կարգաւորման գործընթացը եւ հայկական կողմի մտայնութեանը: Միջազգային ամենահեղինակաւոր ամպիոնից Էդուարդ Նալբանդեանը խօսել է Հայաստանի նախագահի նախաձեռնութեամբ սկսուած հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացի մասին:

Նոյն օրը Էդուարդ Նալբանդեանը հանդիպել է ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հետ, ինչն այս տարի Հայաստանի եւ Միացեալ Նահանգների արտաքին քաղաքական գերատեսչութիւնների ղեկավարների երկրորդ հանդիպումն էր:

Ողջունելով Հայաստանի արտգործնախարարին՝ ԱՄՆ պետքարտուղարը նշել է, որ Միացեալ Նահանգները Հայաստանի գործընկերն է թէ ժողովրդավարական բարեփոխումների, թէ տնտեսական զարգացման բնագաւառներում: Տիկին Քլինթոնի բնորոշմամբ հայ-ամերիկեան յարաբերութիւնները համապարփակ, ընդգրկուած եւ խոր բնույթ ունեն: Պետքարտուղար Քլինթոնը ամերիկեան վարչակազմի անունից պատրաստակամութիւն է յայտնել շարունակելու համակողմանի հա-

մագործակցութիւնը Հայաստանի նախագահի, կառավարութեան եւ արտգործնախարարի հետ: Անդրադառնալով հայ-թուրքական յարաբերութիւններին՝ Հիլարի Քլինթոնը բարձր է գնահատել Հայաստանի ջանքերը թուրքիայի հետ յարաբերութիւնները կարգաւորելու ուղղութեամբ եւ վերահաստատել է ԱՄՆ-ի դիրքորոշումն առ այն, որ Հայաստանի եւ թուրքիայի միջեւ յարաբերութիւնների կարգաւորումը պէտք է լինի առանց նախապայմանների եւ խելամիտ ժամկէտներում:

Էդուարդ Նալբանդեանը, գոհունակութիւն յայտնելով հայ-ամերիկեան բարձր մակարդակի կանոնաւոր շփումների կապակցութեամբ՝ ընդգծել է, որ Հայաստանը կարեւորելով Միացեալ Նահանգների հետ յարաբերութիւնների առաւել ամրապնդումը, հետամուտ է լինելու ԱՄՆ-ի հետ բարեկամական գործընկերութեան զարգացմանն ու խորացմանը եւ համագործակցութեան ընդլայնմանը: Նախարար Նալբանդեանը շնորհակալութիւն է յայտնել հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացին ԱՄՆ աջակցութեան համար: Արցախեան հիմնախնդրի քննարկման ժամանակ Էդուարդ Նալբանդեանը կարեւորել է ԱՄՆ-ի՝ որպէս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրի դերակատարութիւնը հիմնախնդրի հանգուցալուծմանն ուղղուած բանակցային գործընթացում: Հայաստանի եւ ԱՄՆ արտաքին քաղաքական գերատեսչութիւնների ղեկավարները մտքեր են փոխանակել երկուստեք հետաքրքրութիւն ներկայացնող հարցերի շուրջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԵՐՔՈՒՄ Է ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի Պաշտպանութեան նախարարութիւնը հերքել է Ատրպեյձանի ՊՆ-ի մամուլի քարտուղար Էլզար Սաբիրօղլուն Սեպտեմբերի 25-ին յայտարարութիւնը, թէ իբր վերջին մէկ տարուայ ընթացքում զօրավարժութիւնների ժամանակ զոհուել են 10 հայ զինծառայողներ, իսկ վերջին զօրավարժութեան ժամանակ 76 զինծառայողներ հրաժարուել են մասնակցել ուսումնական վարժանքներին:

Ըստ ՀՀ ՊՆ-ի Տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերի վարչութեան հաղորդագրութեան է. Սաբիրօղլուի հաղորդած լուրերը բացարձակ չեն համապատասխանում իրականութեանը եւ ընդամէնը Ատրպեյձանի ՊՆ մամուլ խօսնակի հրեւանդ երեւակայութեան արդիւնք են:

ԿՈՆԳՐԵՍԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԵՄ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՔԱՂԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ ՀԱՐՑԵՐ

Սեպտեմբերի 28-ին Հայ Ազգային Կոնգրեսի ներկայացուցիչներ Լեւոն Չուրբեանը, Դաւիթ Շահնազարեանը եւ Վլադիմիր Կարապետեանը հանդիպել են ՀՀ-ում ԵՄ պատուիրակութեան ղեկավար Ռաուլ Դէ Լուցենբերգերին, ԵՄ Հարեւանութեան քաղաքականութեան գործառնական բաժնի ղեկավար Ուֆֆէ Հոլստ Յենսենն եւ հաղորդակցութեան եւ զեկուցման հարցերով պատասխանատու Կարինա Կոստորժեւայի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկուել են ԵՄ Հայաստան համագործակցութեանը, ինչպէս նաեւ Հայաստանում ժողովրդավարութեան վիճակի, մասնաւորապէս քաղաքացիական իրաւունքների հետ կապուած հարցեր:

ՀԱՅԱՍՏԱՆ

«ԻՐԱԿԱՆԱՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍՓԻՌՔԻՑ ՏԱՐԱՆՁԱՏԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԼԻԱԶՕՐՈՒԱԾ ԶԵՆ ՍՓԻՌՔԱՅԱՅՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՐԵԼ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՏ. ԱՍՈՒՄ Է ՀԱՄԲԻԿ ՍԱՐԱՖԵԱՆԸ

Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցության ամերիկեան կառույցի ատենապետ Համբիկ Սարաֆեանի կարծիքով հայ-թրքական արձանագրությունների քննարկումը ափիւռքի հետ պետք է սկսուեր ոչ թէ հիմա, այլ շատ աւելի վաղ:

Կարեւոր է, որ Հայաստանը եւ ափիւռքը հասկանան, թէ ինչը ինչի համար է արւում եւ երբ է արւում: Նախագահը ոչ թէ հիմա պետք է հանդիպեր ափիւռքի կառույցների հետ, փաստի արձանագրումից յետոյ, այլ դրանից շատ աւելի վաղ:

Մտահոգութիւնները ոչ թէ այն կէտում են, թէ ինչ է գրուած արձանագրութիւններում, այլ, թէ ինչէս գրուածը շահարկուելու:

Սփիւռքին ամէնից շատ մտահոգող երկու խնդիրների՝ ցեղասպանութեան ու պահանջատիրութեան յետագայ արծարծումը, ըստ ՄԴՀԿ ներկայացուցչի, արձանագրութիւնների վաւերացումից յետոյ շատ աւելի բարդ ու հակասական ընթացք է ունենալու: Այդ հարցերի իրաւական հասցէատէրը, ըստ բանախօսի, հենց ափիւռքն է, որն իրաւունք ունէր մասնակից դառնալ նախորդած քննարկումներին:

«Թէ Հայաստանը ինչպէս է ուզում շփումներ ունենալ թուրքիայի հետ, Հայաստանի ժողովրդի որոշելու գործն է: Սփիւռքը կարող է համաձայն լինել կամ չլինել, բայց, յամենայնդէպս, ափիւռքը չի կարող պարտադրել Հայաստանին թէ ինչպէս է պատկերացնում յարաբերութիւնները թուրքիայի հետ», նշեց ՄԴՀԿ-ի Ամերիկայի ատենապետը:

Իսկ ինչ վերաբերում է Յե-

ղասպանութեան հարցին, ապա այստեղ, ըստ բանախօսի, «հարցը տարբերում է եւ շատ աւելի կարեւոր է դառնում Սփիւռքի կարծիքը»:

«Վերջի վերջոյ, Հայ պահանջատիրութեան իրաւատէրը ափիւռքահայութիւնն է, ինչպէս նաեւ՝ Հայաստանում ապրող բոլոր այն զաղթականների զաւակներն ու ժառանգները, որոնք ենթարկուել են Յեղասպանութեան», ասաց Համբիկ Սարաֆեանը:

«Հայաստանը հնարաւորութիւն չունի Յեղասպանութեան հարցը՝ որպէս պետական քաղաքականութիւն արծարծել», ընդգծեց ատենապետը:

Այս պարագայում ՄԴՀԿ ներկայացուցչի համար անհասկանալի է, թէ ինչպէս «առանց խորհրդակցելու»՝ ափիւռքայի հետ, Հայաստանի «որեւէ իշխանութիւն» կարող է նման հարց քննարկել:

«Զի կարելի սեղանի վրայ դնել մի հարց եւ յետոյ ասել՝ «գիտէ՞ք ինչ, այս հարցը քննարկման ենթակայ չի», նշեց ատենապետը եւ յաւելեց, որ յոյս ունեն, որ «Հայաստանի այս իշխանութիւնը կը փոխի մօտեցումը եւ Հայաստանին կ'ազատի քաղաքական մի փակուղուց, որ մտել է»:

Ինչ վերաբերում է Սերժ Սարգսեանի մէկշաբաթեայ համահայկական ուղեւորութեանը, որի նպատակն է լսել հայկական ափիւռքի կարծիքները հայ-թրքական յարաբերութիւնների կարգաւորման վերաբերեալ, ապա, Համբիկ Սարաֆեանի կարծիքով, դրա արդիւնքում էլ չի ներկայացուի ափիւռքի իրական կարծիքը:

«Մտավախութիւնն այն է, որ սա վերածուելու է PR կամպանիայի: Եւ երբ հանդիպումներ լինեն, «Հ1»-ը նման սովորութիւն ունի՝ շատ սիրուն նկարեն, մի քանի խօսքեր ասեն եւ առանց Սփիւռքի կարծիքը լիարժէք ներկայացնելու՝ ասուի, որ նախագահը գնաց Սփիւռք, հանդիպեց Սփիւռքի ժողովրդի հետ եւ Սփիւռքը համակարծիք է», յայտարարեց Համբիկ Սարաֆեանը:

Վերջինիս կարծիքով՝ շատ աւելի արդիւնաւէտ պիտի լինէր, եթէ այս հանդիպումը լինէր 3 ամիս առաջ:

Հայ-թրքական յարաբերութիւններում Սփիւռքի ներկայացուցչի ներկայացուցչի կարծիքին տեղեկանալու եւ այդ կարծիքը հաշուի առնելու՝ Հայաստանի իշխանութիւնների անկեղծութեանը երէկ դժուար էր հաւատալ, Սփիւռքում գործող կուսակցութեան՝ ՄԴՀԿ-ի հայ-թրքական յարաբերութիւնների մասին տեսակէտներ ներկայացնող ասուլիսին ներկայ չէր ոչ Հանրային հեռուստատեսութիւնը, ոչ էլ իշխանական վերահսկողութեան ներքոյ գտնուող մի շարք հեռուստաընկերութիւններ:

ՄԴՀԿ ներկայացուցչի խօսքերով՝ հայ-թրքական արձանագրութիւնների ընդունումը կը խորացնի Հայաստան-Սփիւռք անջրպետը: «Հայաստանը Սփիւռքից տարանջատելու թուրքիայի իրականացրած վաղեմի քաղաքականութիւնն անուղղակի իրականութիւն է դառնում», յայտարարեց նա:

Համբիկ Սարաֆեանը կարծում է, որ Հայաստանի իշխանութիւնը նահանջի տեղ չունի, արդէն իսկ «այո»-ն ասել է, եւ նահանջը անլուրջ կարող է ընկալուել: ՄԴՀԿ ներկայացուցչի համոզմամբ՝ հայ-թրքական արձանագրութիւնները կարող էին այլ տեսք ունենալ, եթէ Հայաստանում առկայ ներքին չլուծուած խնդիրները չլինէին: «Սրա շարունակութիւնը, բնականաբար, դարաբաղեան հարցն է», ասաց նա: Սարաֆեանը նշում է, որ Սփիւռքը Հայաստանի իշխանութեան վարած քաղաքականութեանը ներազդելու հնարաւորութիւններ չունի, եւ առաջին հերթին դա պետք է անի Հայաստանի ժողովուրդը: «Սփիւռքը չի ժխտում, որ անհրաժեշտ է յարաբերութիւններ ունենալ: Ինչ վերաբերում է Յեղասպանութեան հարցին՝ Սփիւռքը շատ աւելի միահամուռ է: Ինչպէս կարելի է այս հարցն այսպէս արծարծել: Սփիւռքը պատրաստ չի եւ պատրաստ չի եղել երբեք: Եթէ Հայաստանի ներքին հարցերը լուծուած չեն, ինչպիսի որոշումներ էլ ընդունուեն, միշտ կ'սկսածելի բնոյթ են ստանալու», նկատեց ՄԴՀԿ ներկայացուցչի:



«Սփիւռքը չի ժխտում, որ անհրաժեշտ է յարաբերութիւններ ունենալ: Ինչ վերաբերում է Յեղասպանութեան հարցին՝ Սփիւռքը շատ աւելի միահամուռ է: Ինչպէս կարելի է այս հարցն այսպէս արծարծել: Սփիւռքը պատրաստ չի եւ պատրաստ չի եղել երբեք: Եթէ Հայաստանի ներքին հարցերը լուծուած չեն, ինչպիսի որոշումներ էլ ընդունուեն, միշտ կ'սկսածելի բնոյթ են ստանալու», նկատեց ՄԴՀԿ ներկայացուցչի:

ԺՈՂՈՎՈՒՐԴ-ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԱՆՎԱՏԱՅՈՒԹԵԱՆ ՄԹՆՈՒՈՐՏԻ ԱՐԴԻՒՆՔՆ ԵՆ ՆՎԱՏՈՒԱԾ ՔԱՅԼԵՐԸ

Լիբանանի հայկական համայնքը ներկայացնող երկրի խորհրդարանի նախկին եւ ներկայ երկու պատգամաւորներ ՄԴՀԿ անդամ Եղիա Ճէրէճեանը ու Սեպուհ Գալբակեանը այսօր խօսեցին հայ-թրքական նախաստորագրուած արձանագրութիւնների մասին:

Նախկին պատգամաւոր Եղիա Ճէրէճեանը յայտնեց, որ Սփիւռքում, ինչպէս եւ Հայաստանում միատեսակ մտածելակերպ չկայ այս հարցի շուրջ:

«Ժողովուրդ-իշխանութիւն անվատանութեան միջոցառումի արդիւնքն են նկատուած քայլերը: Մարդիկ ենթադրում են, որ արձանագրութիւնների մէջ կան բաներ, որոնք անվատանութիւնից են բխում: Կան մարդիկ, որ գտնում են, թէ թուրքիայի հետ յարաբերութիւններ սկսելը ոչ մի կերպ չի վնասի Հայաստանին: Կան մարդիկ, որոնք վախենում են, որ այս քայլը կարող է առաջանորդուել Յեղասպանութեան ուրացմամբ», ասաց նա:

Նշուեց նաեւ, որ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման վերջին զարգացումները շատ երկար քննարկուել են նաեւ ՄԴՀԿ-ի վերջին օրերին կայացած համագումարում, եւ այնտեղ եւս հնչել են տարբեր տեսակետներ: Եղիա Ճէրէճեանի խօսքերով, դա «շատ բնական է, որովհետեւ սա շատ այժմէական է, կենսունակ հարց է»: Արդիւնքում համագումարի յայտարարութեան մէջ յստակ ամրագրուել է, որ



ՄԴՀԿ-ի համար անընդունելի է որեւէ գիշում Հայոց ցեղասպանութեան եւ դարաբաղեան հիմնախնդրի հարցերում:

Լիբանանի խորհրդարանի ներկայիս պատգամաւոր Սեպուհ Գալբակեանի խօսքով՝ «Մեր վերլուծութիւնն այն է, որ Ամերիկան ինքն է այս փոխ-յարաբերութեան կնքահայրը դա բխում է նրանից, որ Հայաստանն ուզի, չուզի, մօտիկ յարաբերութիւնների մէջ է իրանի հետ, ուստի Ամերիկայի քաղաքականութիւնն է իրանը պաշարել աշխարհագրականօրէն: Դրա համար Ամերիկայի նպատակն է Հայաստանը կտրել իրանից ու Ռուսաստանից»:

Նա վստահ է, որ ԱՄՆ-ի շահերը չեն համապատասխանում

Հայաստանի շահերին, բայց, ըստ նրա, կայ նաեւ պրագմատիկ քաղաքականութիւն, այն է՝ սահմանի բացումն ու դեսպանութիւնների հիմնումը իշխանութիւնները կարող են այնպէս տանել, որ չազդի Յեղասպանութեան հարցի վրայ: Եթէ թուրքիայի հետ յարաբերութիւնների հաստատումը պետք է լինի ցեղասպանութեան եւ շարաբաղի հարցում գիշումների գնով, ապա իրենք դէմ են:

«Մեր ժողովուրդն աշխարհացրիւ է, եւ Յեղասպանութեան հարցում Սփիւռքն իր բարոյական խօսքը պետք է ասի, իսկ իշխանութիւնները պետք է նկատի ունենան նաեւ Սփիւռքի ասածները», յայտարարեց Ս. Գալբակեանը:

ՀԱՅ-ԹՈՒՐԵԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն

նի արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանը եւ թուրքիայի արտգործնախարար Ահմետ Դաւութօղլուն:

Արարողութեանը, ամենայն հաւանականութեամբ, կը մասնակցի նաեւ երկու երկրների միջեւ բանակցութիւններում միջնորդ հանդիսացող երկրի՝ Շուէյցարիայի արտգործնախարար Միշլին Քալմի-Ռեյլը:

Արձանագրութիւնների ատորագրումից յետոյ երկու երկրների կառավարութիւնները փաստաթուղթով կը ներկայացնեն խորհրդարանների վաւերացմանը:

Պատասխանելով «Ազատութիւն» ռատիոկայանի հարցին՝ Հայաստանի արտգործնախարարութեան մամուլի խօսնակի պաշտօնակատար Տիգրան Բալայեանը Կիրակի օրը ոչ հաստատեց, ոչ էլ հերքեց այս տեղեկութիւնը՝ ընդգծելով, որ արտգործնախարարութիւնը հայ-թուրքական յարաբերութիւններին առնչուող գործընթացների մասին հանրութեանը կը տեղեկացնի պատշաճ ժամկէտներում:

Երկուշաբթի Հայաստանի նախագահի մամուլի խօսնակ Սամուէլ Ֆարմանեանը, արձագանքելով թուրքիայի վարչապետի յայտարարութիւններին, ամանաւորապէս, ասել է. «Երբ որ գործընթացի յաջորդ փուլերի վերաբերեալ յստակութիւն լինի, ապա մենք դրա մասին կը տեղեկացնենք»:

ՇԱՄԱԳՈՒՄԱՐ

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 19-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ

Շարունակում է 1-ին

Դահլիճը լեցում էր կուսակցության անդամներով ու հրաւիրեալներով:

Հանդիսության բացումը կատարեց ՄԴՀ «Սարգիս Տիրունի» Երիտասարդական Միության անդամ Ընկ. Նարեկ Գալստեան, որ հրաւիրեց յոտնկայս ունկնդրելու Հայաստանի Հանրապետության եւ ՄԴՀ քայլերգները, որոնք կատարուեցան Յասմիրկ Զաքարեանի եւ Վահագն Մարգարեանի կողմից: Ապա, ներկաները մեկ վայրկեան յոտնկայս լուսվեցան շարժեցին Հայ Ժողովուրդի բոլոր նահատակներու չիշատակը:

Բացման խօսքով հանդէս եկաւ ՄԴՀ Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկեր Սեդրակ Աճէմեան: Ան իր ելույթին մէջ յայտարարեց որ, Հայ Ժողովուրդի համար բախտորոշ ժամանակաշրջանի մը, երբ մեր ազգի առջեւ կան բազմաթիւ մարտահրաւէրներ, հաւաքուած ենք քաղաքամայր Երեւանի մէջ հանդիսաւոր բացումը կատարելու Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան 19-րդ Համագումարի ու աւելցուց, որ կուսակցութեան 122-ամեայ պատ-



ուաւ: Իսկ վերջերս հրապարակուած երկու Արձանագրութիւնները եկան հիասթափութեան ու զայրոյթի հսկայ ալիք մը յառաջացնելու սփիւռքի տարածքին ապրող մեր ժողովուրդի գաւազններուն մօտ»:

Խօսելով Հայաստանի մէջ Հնչակեան Կուսակցութեան ունենալիք դերի մասին Ընկ. Աճէմեան ըսաւ.- «Հնչակեան Կուսակցութիւնը, որպէս ազգային ու ընկերակցական գաղափարախօսութիւն դաւանող կուսակցութիւն, կը ձգտի ունենալ իր ուրոյն տեղը Հայաստանի քաղաքական կեանքին ներս, դառնալու համար ժողովուրդի համեստ խաւի ընկերային ու տնտեսական իրաւունքներու պաշտպանը: Մենք այդ դերը կրնանք կատարել միայն այն ժամանակ, երբ կան ու կը գործեն ժողովրդավարական սկզբունքներ՝ եւրոպական չափանիշերուն համապատասխան ու մեր առջեւ բաց ըլլան զանգուածային լրատուական միջոցները որպէսզի կարողանանք մեր տեսակէտները հասցնել հասարակութեան: Այլապէս, մեր կուսակցութիւնը եւ միւս բոլոր ընդդիմադիր կազմակերպութիւնները պարտաւորուած կ'ըլլան դիմելու փողոց ու հրապարակներ՝ ժողովուրդին հետ հաղորդակից դառնալու համար»:

Աւարտելով իր խօսքը ՄԴՀ ատենապետը ըսաւ.- «Հնչակեան Կուսակցութեան իւրաքանչիւր համագումար եղած է շրջադարձային: 19-րդ Համագումարը կայանալով մեր ժողովուրդի համար ճակատագրական այս օրերուն, կը ստանայ առաւել մեծ կարեւորութիւն: Այս գիտակցութեամբ է որ այնպէս ի տարբեր կողմերէն Հնչակեան պատուիրակները ժամանած են Երեւան, Հայաստանի իրենց գաղափարակիցներու հետ միատեղ կատարելու անցեալ շրջանի արժեւորումը եւ ապագայ գործունէութեան ծրագրաւորումը՝ յօգուտ մեր ազգին ու Հայրենիքին»:

